Փոքրաշեն

Վարչական ղեկավար՝ Կարեն Վարդանյան

Հեռ 093 81 52 95

Մակերես՝ 7.5կմ^2

Բնակչություն՝ 207

poqrashen.shirak@mta.gov.am

Գյուղ Գյումրու տարածաշրջանում, Գյումրի քաղաքից գտնվում է 14կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գետիկ Ներքին, Լեռնանցք, Կեյտի Պոկր, Կետի Պոկր, Քեթի Ներքին անվանումները: Փոքրաշեն է վերանվանվել 1967 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ:
Գյուղը գտնվում է մեղմաթեք լեռնալանջի վրա՝ ծովի մակարդակից 1900մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը, սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են:
Գյուղը զգալի տուժել է 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից, որի արդյունքում ավերվել են գյուղի շինությունների մոտ կեսը::
Գյուղի տարածքում գտնվում էս. Հակոբ եկեղեցին:
Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Բասենի շրջաններից 1829-1830թթ: 1831 թ-ին գյուղն ունեցել է 121, 1897 թ-ին՝ 388, 1926 թ-ին՝ 218, 1939 թ-ին՝ 369, 1959 թ-ին՝ 309, 1970 թ-ին՝ 196, 1979 թ-ին՝ 212, 1989 թ-ին՝ 193 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 207 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ և կանայք ունեն նույն համամասնությունը՝ կազմելով 50-ական տոկոս: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 28%, աշխատունակներ՝ 55%, հետաշխատունակներ՝ 17%: Ունի 22 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան , բուժկետ, կապի հանգույց:
Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 120 և 564 հեկտար: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը կաթնամսատու անասնապահությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի, ճակնդեղի մշակությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. փոքրաշեն
Ինդեքս՝ 2626